ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«7 օգոստոսի» 2012 թ.

02/7-1383

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
պրն Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան,

Ի պատասխան Ձեր 25.07.2012թ. թիվ 02/12.10/10299-12 և 26.07.2012թ. թիվ 02/12.10/10403-12 գրությունների, հայտնում ենք, որ համապատասխանաբար «ՀՀ կառավարության և Ավստրալական Միության կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» և «ՀՀ կառավարության և Ֆիլիպինների Հանրապետության կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերի վերաբերյալ սկզբունքային դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Միաժամանակ Ձեզ ենք ուղարկում վերոնշյալ համաձայնագրերի նախագծերի վերաբերյալ ՀՀ Նախագահի աշխատակազմի փորձագիտական-վերլուծական վարչության եզրակացությունը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հ. Բաղդասարյան

ՍՏԱՑՎԱԾ
ԱՇԽ-20542
07.08.12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎՍՏՐԱԼԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻԼԻՊԻՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀՀ կառավարության և Ավստրալական Միության կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» և «ՀՀ կառավարության և Ֆիլիպինների Հանրապետության կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրերի նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) վերաբերյալ հայտնում ենք հետևյալ նկատառումը.

Առաջարկում ենք Նախագծերից համապատասխանաբար հանել 5-րդ հոդվածի 4-րդ մասը՝ ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության կողմից նախկինում կնքված ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին տիպային համաձայնագրերում նման դրույթ առկա չէ:

Իսկ եթե խոսքը վերաբերվում է պայմանավորվող կողմերից որևիցե մեկի օրենսդրության փոփոխության արդյունքում մյուս կողմի ներդրողներին հնարավոր կորուստներից և վնասներից ապահովագրելու անհրաժեշտությանը, ապա առաջարկում ենք քննարկել «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված *դրույթը համաձայնագրերում նախատեսելու նպատակահարմարությունը, այն է.* «պայմանավորվող կողմի՝ օտարերկրյա ներդրումները կարգավորող օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում, մյուս պայմանավորվող կողմի ներդրողի ցանկությամբ, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը»:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ /Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

03.08.12թ

Կատարող Կ. Մուխսյան